# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**18 ապրիլի 2025 թվական, N 53-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ 2 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներու, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21) ենթակետով, 35-րդ հոդվածի 1-ին կետի 16) և 18) ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, Թումանյան փողոց, 33 հասցեում գտնվող մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի շենքից անհատույց օգտագործման իրավունքով, 2 տարի ժամկետով տարածք հատկացնել Հայաստանի Ազգային պատկերասրահի Ալավերդու մասնաճյուղին՝ Պատկերասրահի գործունեությունը կազմակերպելու համար:
2. Հանձնարարել և լիազորել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կնքել տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ (17) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԼՀ (0)

| | |
|---|---|
| ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ |
| ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ |
| ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ |
| ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ |
| ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ |
| ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ |

| | |
|---|---|
| ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ |
| ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ |
| ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ |
| ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ |
| ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ |
| ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ |
| ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ |
| ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ |
| ՍԱՄՎԵԼ | ԷԼԲԱԿՅԱՆ |
| ԱՐԱՄԱՅԻՍ | ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ., ապրիլի 18,
Լոռու մարզ, ք. Ալավերդի